

## **Իշխանությունների տարանջատման սկզբունքի համեմատական և բուլղարական կիրառումները\***

ԵՎԳԵՆԻ ՏԱՆՉԵՎ

*Բուլղարիայի Հանրապետության սահմանադրական դատարան, Բուլղարիա*

Ստացված է 18.03.2015

Ընդունված է 15.03.2016

*Հոդվածում դիտարկվում են ժողովրդավարական կառավարման հիմնական գաղափարներից մեկի՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական իրացմանն ու կիրառմանը վերաբերող տեսական և կիրառական խնդիրները: Կարևորվում է այն արժեքների նշանակությունը, որոնց առկայությունը հասարակական կյանքում հիմք է դարձել հիմնական սահմանադրական սկզբունքների ձևավորման համար: Արձանագրվում է, որ եթե անզամ սահմանադրության տեքստում օգտագործվում են ժողովրդավարական սկզբունքներ, դրանք չեն գործի այդ սկզբունքների սկզբնական իրական ժողովրդավարական էությունը, որոնք կարող են տեղի ունենալ ժողովրդավարական սկզբունքների հետ, եթե հասարակությունում տիրապետող են այլ հիմք ունեցող արժեքներ: Բուլղարիայի օրինակով ներկայացվում են այն խնդիրներն ու դրանց լուծումները, որոնք բնորոշ են հետկոմունիստական երիտասարդ ժողովրդավարություններին:*

### **Բանալի բառեր**

Բուլղարիայի սահմանադրություն, լիազորությունների տարանջատում, ժողովրդավարական սկզբունքներ, սահմանադրական դատարան:

Սահմանադրական սկզբունքները ժողովրդի կողմից հավանություն արժանացած ժողովրդավարական սահմանադրական նախագծի հիմքում ընկած արժեհամակարգի պարտադիր պայման են: Բոլոր սահմանադրական սկզբունքները պետք է գործեն համաձայնեցված կարգով, և ոչ մի սկզբունք չպետք է անտեսվի կամ օգտագործվի որպես հաղթաթուղթ մյուսների դեմ: Իշխանությունների տարանջատման սկզբունքը կառավարման համակարգի միակ պարտադիր պայմանը չէ սահմանադրական ժողովրդավարություններում: Սահմանադրական

---

\* Հոդվածը «Սահմանադրական գործընթացների ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի վրա» (Երևան, 3-4 նոյեմբերի, 2014թ.) համաժողովում ներկայացված զեկույցի լրամշակված տարբերակն է:

դիզայնի շրջանակներում ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքի օրինաչափությունները և ձևերը որոշում են պետական կառավարման ձևը սահմանադրության նախագծման ժամանակ: Դա, թերևս, քաղաքական իշխանության և քաղաքական ազատության փոխհարաբերությունների առավել դինամիկ ցուցանիշն է: Պատահական չէ, որ Բեռլինի անկումը նոր սահմանադրական շրջանակների ձևավորման պատճառ դարձավ Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի երիտասարդ ժողովրդավարություններում, որտեղ իշխանությունների բաժանումն արմատավորվեց որպես նախկին խորհրդային վարչակարգերին բնորոշ իշխանության միասնականության սկզբունքին հակոտնյա սկզբունք:

Նոր ժողովրդավարական սահմանադրությունները, տնտեսական վերափոխումներին զուգահեռ, դարձան ժողովրդավարությանն ու շուկայական տնտեսությանն անցման առավել կարևոր անկյունաքարերից: Ժողովրդավարական սկզբունքների ու չափանիշների վրա հիմնված սահմանադրական շրջանակները ճանապարհի հարթեցին Եվրոպայում ի հայտ եկած նոր ժողովրդավարությունների վերափոխման համար՝ ԵՄ-ին, Հյուսիսատլանտյան դաշինքին, ապա՝ ԵՄ-ի պահանջներին ներքին օրենսդրության համապատասխանեցման գործընթացը հաջողությամբ ավարտելուց հետո, նաև Եվրոպական միությանն անդամակալության համար:

### **Իշխանությունների տարանջատման սկզբունքի չափումները**

Կոմունիստական հեղաշրջումից առաջ և հետո գրեթե բոլոր այդ երկրներում, բացառությամբ մի քանիսի, չկար խորհրդարանական կառավարման և իշխանությունների լիարժեք տարանջատման ազգային ավանդույթ: Անկասկած, միջպատերազմյան շրջանում Չեխոսլովակիան առավել պատկերավոր օրինակ էր մյուս հետխորհրդային երկրների համար: Այդուհանդերձ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, այդ թվում՝ Բուլղարիայում, կառավարման փորձը՝ նույնիսկ հարաբերականորեն առավել ժողովրդավարական

փուլերում, չի համապատասխանում Արևմուտքին բնորոշ արդի ժողովրդավարական չափանիշներին<sup>1</sup>:

Սահմանափակ սահմանադրական կառավարումը հիմնված է ժողովրդի ինքիշխանության, իշխանությունների տարանջատման, քաղաքական բազմակարծության, օրենքի և միջազգային իրավունքի գերակայության, մարդու իրավունքների պաշտպանության, մասնավոր սեփականության և ազատ նախաձեռնության իրավունքի վրա:

Խորհրդարանական կառավարումը հիմնված է կոնֆլիկտների և փոխգործակցության պայմաններում անկախ կամ համագործակցային հիմունքներով գործող օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների առանձին քաղաքական ինստիտուտների հավասարակշռության վրա: Չնայած վերջին քսանհինգ տարիների ընթացքում սահմանադրական շրջանակները երբեմն քննադատության էին ենթարկվում իշխանությունների հավասարակշռության սկզբունքին առնչվող լուծումներում առկա թերությունների համար, այդուհանդերձ սահմանադրության մեջ հաջողվում էր ապահովել կայուն երաշխիքներ սահմանափակ կառավարման համար և կանխել կամայական իշխանության առաջացումը՝ մասնավորապես իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման միջոցով: Ինչպես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ժողովրդավարություններում նոր ընդունված սահմանադրությունները, այնպես էլ Բուլղարիայի Հանրապետության 1991թ. սահմանադրությունը կառավարման նախկին համակարգի հետ բոլոր կապերը խզող փաստաթղթի օրինակ էր, որն ուղղակիորեն հռչակում էր իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի տարանջատման սկզբունքը (8-րդ հոդված):

1993թ. Բուլղարիայի սահմանադրական դատարանը վերահաստատեց իշխանությունների տարանջատման սկզբունքի ավանդական

<sup>1</sup> **Huntington S.**, *Third Wave: Democratization in the Late Twentieth Century*, University of Oklahoma Press, 1991, 272-273, **Bell J.**, *Peasants in Power: Al Stamboliski and the Bulgarian National Union (1899-1923)*, 1977; **Moser Ch.**, *Political History of the Transition in Bulgaria*, Sofia, 1995; **Katrugalous G.**, *Report on the Balkan Constitutionalism at the Rigas Network Opening Conference in Athens, April 1-4, 1999*; *Rigas Network, Opening Conference Reports*: **Schmitt C.**, *Theorie de la constitution*, Leviathan, Presses universitaires de France, 1993; **Tanchev E.**, *The Constitution and the Rule of Law, Bulgaria in transition*, ed. J. Bell, Westview Press, 1998, 65-90.

մոտեցումը<sup>2</sup>: Դատարանի որոշման համաձայն՝ իշխանությունների տարանջատումը մեծ չափով հարաբերական հայեցակարգ է, որի կիրառումը պայմանավորված է պատմական և քաղաքական որոշ գործոններով: Իշխանությունների տարանջատման սկզբունքի շրջանակներում պետական իշխանությունն ունի գործունեության երեք տարբեր ոլորտներ, որոնք իրականացնում են իշխանության երեք անկախ և, միաժամանակ, փոխգործակցող ճյուղեր: Դատարանը փաստում է, որ իշխանությունների տարանջատման սկզբունքը բարձրագույն պետական իշխանության արդյունավետ գործարկումն ապահովելու միջոց է և ոչ իրավաչափ պետական մենիշխանությունն ու անօրինականությունները կանխելու երաշխիք: Վերջիններս կարող են կործանարար ազդեցություն ունենալ սահմանադրական կառավարման ձևի և քաղաքացիների իրավունքների ու ազատությունների վրա: Դատարանն արձանագրում է, որ պետական գործառույթների տարանջատումը պետք է իրականացվի բացառապես իշխանությունների տարանջատման ճանապարհով, ինչն անհրաժեշտ է քաղաքական ինստիտուտների տարբերակման համար: Ուստի, սահմանադրական դատարանը հաստատում է հին հայեցակարգային շրջանակներից բխող տեսությունը, որը կարելի է վերագրել Ժ. Բոդենի՝ պետության ինքնիշխանության բանաձևին, և Ժ. Ժ. Ռուսոյի ծայրահեղ ժողովրդավարական գաղափարներին՝ աղավաղված խորհրդային վարչակարգերին բնորոշ պետական իշխանության միասնականության սկզբունքի ազդեցությամբ: Որոշման բովանդակությունը մեծ չափով պայմանավորված է խորհրդարանական կառավարման ձևում օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև լիազորությունների, այսպես կոչված, «փափուկ» տարանջատման պրակտիկայով: Եզրակացության մեջ դատարանն արձանագրում է, որ այդ սկզբունքը չպետք է մեկնաբանվի որպես եռակողմ պետական իշխանություն, և որ իշխանությունները միմյանցից բաժանված չեն «Չինական պատով» (դատարանի նկատառումն է)՝ միասնական պետական իշխանության և ինքնիշխանության իրականացման գործընթացում մշտապես

<sup>2</sup> Decision N 6 of April 22 1993, Case N 4/93 of the Constitutional Court of the Republic of Bulgaria, Constitutional Court of the Republic of Bulgaria, Jurisprudence 1991-1996, Open Society Institute, COLPI, Sofia, 1997, (in Bulgarian), 49-51.

փոխներգործող տարբեր պետական ինստիտուտների գոյության պայմաններում: Իշխանությունների տարանջատման սկզբունքի նշանակությունը շատ ավելի բարդ և բազմաչափ է, քան մեկնաբանում էր Բուլդարիայի սահմանադրական դատարանը 1992թ. անցումային փուլի մեկնարկի ժամանակ:

Քաղաքականությանն ու սահմանադրական տեսությանը հաճախ բնորոշ է կոնկրետ սկզբունքի մեկնաբանումն իր առանձնահատկությունների և մասնավոր կիրառությունների միջոցով՝ առանց հաշվի առնելու դրա բազմակողմ, համապարփակ բովանդակությունը: Չափազանց բարդ է թվարկել որևէ սկզբունքին վերագրվող բոլոր նշանակությունները: Դա հաճախ կիրառվում է՝ հիմնավորելու համար պետական կառավարման գործընթացում գործառույթների տարանջատումը, քաղաքական գործունեության առանձնացումը պետական կառավարման բյուրոկրատիայից, պետական մարմինների գործառույթների և իրավասությունների տարբերակումը, և այլն<sup>3</sup>:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը սահմանադրություններում ներառելու հիմնական նպատակն էր քաղաքական ինստիտուտների միջև իշխանությունների տարանջատման վրա հիմնված կառավարման համակարգի ստեղծումը՝ քաղաքացիական ազատության և ժողովրդավարության վրա կործանարար ազդեցություն ունեցող բացարձակ իշխանության վտանգը կանխելու համար<sup>4</sup>: Իշխանությունների տարանջատման սկզբունքի էությունը կարելի է

<sup>3</sup> Եթե այլընտրանքային կամ փոխարինման կարգով իշխանությունների բաժանման սկզբունքի առանձնահատկություններն օգտագործվում են դրա բովանդակությունն արտահայտելու համար, ապա ճշմարիտ է կարծել, որ դա կառավարման բոլոր ձևերին բնորոշ համընդհանուր սկզբունք է: Ուստի, այն կիրառելի է նույնիսկ ամբողջատիրական և ավտորիտար վարչակարգերի դեպքում, քանզի քաջ հայտնի է, որ բռնապետությունը ևս հենվում է պետական գործառույթների որոշակի բաժանման վրա, քանի որ նույնիսկ բացարձակ միապետը չի կարող միայնակ իրականացնել պետության ժամանակակից բյուրակրատական ապարատի տարբեր գործառույթները:

<sup>4</sup> Միացյալ Նահանգների սահմանադրությունը և Ֆրանսիայի Մարդու և քաղաքացու իրավունքների մասին 1789թ. հռչակագրի 16-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում էին իշխանությունների բաժանման սկզբունքի կապը ժողովրդավարական քաղաքական վարչակարգի և քաղաքական ազատությունների համակարգի հետ; *Constitutions that Made History*, ed. by A. P. Blaustein and J. Sieglar, New York, 1988, 14-117.

բացահայտել դրա գործառույթների, սահմանադրական կառավարման ու քաղաքական ազատության վրա ունեցած ուղղակի և անուղղակի ազդեցությունների միջոցով: Լինելով ազատության և ժողովրդավարության ցուցանիշ ու երաշխիք՝ սահմանափակ իշխանությամբ օժտված լեզիտիմ սահմանադրական կառավարման պայմաններում, իշխանությունների տարանջատման սկզբունքն ունի համընդհանուր նշանակություն, որը տեսանելի է մի քանի ուղղություններով.

- Անհատական ազատությունների, կոլեկտիվ իրավունքների, ինչպես նաև ժողովրդավարական վարչակարգի կայունության երաշխավորում՝ բացառելով իշխանության չարաշահումը, զավթումը և կենտրոնացումը որևէ ինստիտուտի, անհատի, խմբի ձեռքում,

- Քաղաքական համակարգի, վարչակարգի և գործընթացի զարգացման դինամիկայի բացահայտում,

- Կառավարման ձևի սահմանում, որը մեծապես պայմանավորված է սահմանադրությամբ ամրագրված իշխանությունների տարանջատման մոդելով,

- Այլ սահմանադրական սկզբունքների, մասնավորապես, ժողովրդի ինքնիշխանության և օրենքի գերակայության (*Rechtsstaat*)՝ որպես պետական կառավարման օրինականության նախապայմանի, հետ ֆունկցիոնալ կապի հաստատում,

- Սահմանադրական համակարգի տեսակի՝ անվանական, ազատական կամ նոր սահմանադրականություն, որոշում:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի ժամանակակից բազմակողմ չափումները չեն ենթադրում իշխանության միասնականություն կամ ինստիտուտների միջև գործառույթների ու իրավասությունների պարզ բաժանում սահմանափակ և պատասխանատու կառավարման սահմանադրական շրջանակներում: Սահմանադիր իշխանության տարբերակումը պետական իշխանություններից արդի սահմանադրական կառավարման համակարգի անհրաժեշտ նախապայման է, որն ընկած է սահմանադրության գերակայության հիմքում և որոշում է սահմանադրության բնույթը՝ որպես սահմանադիր իշխանության կողմից ստեղծված և ժողովրդի ինքնիշխանությունը

ներկայացնող իրավական փաստաթուղթ<sup>5</sup>: Իշխանությունների նախնական տարանջատումը նպատակ ունի բացառել հապշտապ, ոչ ժողովրդավարական սահմանադրական փոփոխությունների իրականացումն իշխանությունների կողմից, որոնք պարտավոր են գործել լեգիտիմ սահմանադրական կառավարման ձևի համար սահմանված սահմանադրական սահմանափակումների շրջանակներում: Իր հերթին, սահմանադիր իշխանությունը սահմանափակված է սահմանադրական փոփոխությունների իրականացմամբ և չի կարող գործարկվել այդ փոփոխություններն՝ ուժի մեջ մտնելուց հետո: Իշխանություններն իրականացնում են իրենց գործառույթները միայն այն բանից հետո, երբ սահմանադիր իշխանությունը քաղաքական ինստիտուտների համար սահմանում է խաղի կանոնները:

Առաջին սահմանադրություններում ամրագրված իշխանությունների տարանջատման սկզբունքն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների դասական եռյակ է՝ վերապահված խորհրդարանին, նախագահին, կառավարությանը և դատարաններին, որոնց իրավասությունների հարաբերակցությունը կախված է կառավարման ձևից և քաղաքական ավանդույթից<sup>6</sup>: Երեք ճյուղերի միջև իշխանության հորիզոնական բաժանում սահմանելիս սահմանադրությունների տեքստերում ընդգծվում էին պետական ինստիտուտների ինքնավարությունը, անկախությունը, փոխադարձ վերահսկողությունը, փոխգործակցությունը և հնարավոր հակասությունները՝ որպես իշխանությունների հավասարակշռության երաշխիք՝ բացառելով իշխանության կենտրոնացումը, չարաշահումը, զավթումը (ուզուրպացիա), ինչպես նաև բռնապետությունը:

<sup>5</sup> Բուլղարիայի 1991թ. սահմանադրության 9-րդ գլուխը սահմանում է սահմանադիր իշխանությամբ օժտված մարմիններին և սահմանադրական փոփոխությունների իրականացման ընթացակարգերը: Սահմանադրական փոփոխությունների իրականացման կամ նոր սահմանադրության ընդունման միակ լիազոր մարմինը Ազգային մեծ ժողովը կամ խորհրդարանն է, որը ձգտում է հասնել բարձր մակարդակի փոխզիջման հատուկ ընթացակարգերի և քվեարկության ժամանակ ձայների բացարձակ մեծամասնության ճանապարհով:

<sup>6</sup> Պետական իշխանության հորիզոնական բաժանման տարբեր մոդելներ ներկայացրել են Ջ. Լոկը, Մոնտեսքյոն, Ջ. Մեդիսոնը, Բ. Կոնստանը, Ա. Մեբլին, Ու. Բաղջիոթը և այլոք:

Տեղերալիզմի և, ավելի նվազ չափով, ունիտար պետություններում իշխանության ապակենտրոնացման և տեղական իշխանություններին իշխանության լիարժեք փոխանցման արդյունքում առաջ եկավ իշխանությունների տարանջատման սկզբունքի ուղղահայաց չափումը: Դաշնային պետություններում, ինչպես կենտրոնական, այնպես էլ տարածքային իշխանության մարմինների հորիզոնական տարանջատումն օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի պայմանավորված է դաշնության և դրա առանձին սուբյեկտների ինստիտուտների միջև իշխանության ապրիորի սահմանադրական ուղղահայաց բաժանմամբ: Իշխանության ուղղահայաց տարանջատման ժամանակ սահմանադրական սահմանափակումների հիմնական մեթոդը բացառիկ և համատեղ իրավասությունների սահմանումն է<sup>7</sup>:

Իրավական և քաղաքական տեսությունները նպաստեցին իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման առանձնահատուկ օրինաչափությունների մշակմանը՝ առանձնացնելով կամ ներառելով իշխանության նոր տիրապետողների, ինչպես նաև ընդգծելով արտաինստիտուցիոնալ գործոնների ազդեցությունը: Ջ. Լոկի առաջադրած կառավարման մոդելի համաձայն, արտաքին քաղաքականությունը պահպանվեց որպես իշխանության անկախ ճյուղ, իսկ դատական իշխանությունը միավորվեց գործադիր իշխանության հետ: Իշխանությունների տարանջատման սկզբունքի դիտարկման ցանկացած փորձ, մասնավորապես՝ խորհրդարանական կառավարման համակարգի շրջանակներում, կլինի թերի, եթե անտեսվի Բ. Կոնստանի ներդրումն այդ գործում: Վերջինս սահմանում էր իշխանության չորրորդ ճյուղը՝ չեզոք իշխանությունը (*Pouvoir neutre*), որը վերապահված է պետության գլխին (միապետին) սահմանադրական միապետության շրջանակներում: Չնայած իշխանության չորս ճյուղերի հայեցակարգը նախատեսված էր միապետի և ժողովրդի ինքնիշխանության միջև հավասարակշռության հաստատման համար, այդուհանդերձ այն երկրորդ շունչ ստացավ և էական փոփոխությունների ենթարկվեց Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական մի շարք երկրներում խորհրդարանական կամ

<sup>7</sup> Բոլոր դաշնային պետություններին բնորոշ են միջկառավարականության (intergovernmentalism) տարրեր:



կիսանախագահական կառավարման համակարգի ձևավորմամբ: Նախագահական համակարգը հիմնված էր իշխանությունների կարծրացած տարանջատման և ինստիտուտների միջև հակակշիռների ու զսպումների համակարգի մեղիստնյան գաղափարների հիման վրա, որոնք ընդգրկում էին նաև հոգեբանական չափումը, քանզի քաղաքական գործիչների հիմնական նպատակը բռնապետական դրսևորումներին արձագանքումն ու դրանց կանխումն էր:

Արդի սահմանադրական ժողովրդավարություններին բնորոշ է ոչ միայն օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հորիզոնական տարանջատումն, այլև դրանց տիրապետողների ներքին տարբերակումը: 21-րդ դարում իշխանությունների տարանջատման սկզբունքը կիրառվում է պետական իշխանությունների ներքին հավասարակշռության ապահովման համար, ինչն արտահայտվում է երկպալատ խորհրդարանով, գործադիր իշխանության դուալիստական համակարգով (նախագահ և Նախարարների խորհուրդ), ինչպես նաև մասնագիտացված դատարանների անկախությամբ՝ իրենց իրավասության շրջանակներում գտնվող հարցերի առնչությամբ: Ավելին, սահմանադրական դատարանի հետևողական, մասնագիտացված վերահսկողության եվրոպական մոդելը մշակվել է՝ ապահովելու սահմանադրության գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, դատնալու պետական իշխանության զսպման միջոց, ինչպես նաև կանխելու առանձին իշխանությունների՝ իրենց իրավասությունների սահմանված շրջանակի խախտման դեպքերը<sup>8</sup>:

Իշխանությունների հորիզոնական բաժանումն ունի ինստիտուցիոնալ, ֆունկցիոնալ և քաղաքական չափումներ:

Գոյություն չունի կառավարման այնպիսի սահմանադրական համակարգ, որը հիմնված լինի բացարձակ տարանջատման, կոնֆլիկտի և փոխգործակցության բացակայության վրա, քանզի իշխանության ճյուղերի միջև հավասարակշռությունը հաստատվում է միմյանց

<sup>8</sup> 1920թ. Կելսենի հայեցակարգի ներկայացումից հետո ձևավորված սահմանադրական դատարանները ճանաչվեցին եվրոպական սահմանադրական ժառանգության առավել կարևոր ինստիտուտներ, **Rousseau D.**, The Concept of European Constitutional Heritage, in the Constitutional Heritage of Europe, European Commission for Democracy through Law, Council of Europe Publishing, Science and Technique of Democracy, N 18, Strassbourg, 1997, 16-35.

իրավասությունների փոխադարձ վերահսկողության միջոցով՝ նպատակ ունենալով բոլոր պետական ինստիտուտները ենթարկել սահմանադրական սահմանափակումների: Իշխանության հորիզոնական բաժանումից հետո իշխանության ճյուղերից յուրաքանչյուրն իր իրավասության շրջանակներում ստանում է իշխանության այլ ճյուղի իրավասության մեջ մտնող հավելյալ լիազորություններ: Դրանպատակն է փոխադարձ վերահսկողության իրականացման ճանապարհով կանխել բացարձակ իշխանության վտանգը: Օրինակ, վետոյի իրավունքը կապված է օրենսդրական գործընթացի հետ, սակայն վերապահված է գործադիրին, իսկ ներում շնորհելու իրավունքի կիրառմամբ նախագահն ուղղում է դատական սխալները՝ վերականգնելով արդարությունը:

Եթե ամբողջատիրական և բռնապետական համակարգերում կառավարումն իրականացվում է ժողովների և համագումարների անցկացման ճանապարհով՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի լիարժեք բացառմամբ, ապա ավտորիտար, պլեբիսցիտային քաղաքական ռեժիմներում և բռնապետություններում, որոնց լեգիտիմության աղբյուրը պետական շահերի հայեցակարգն է, իշխանությունների տարանջատման սկզբունքը այլատեսակ է:

Քաղաքական բազմակարծության շրջանակներում կուսակցությունները և հանրային ոլորտի բացությունը վերափոխում են իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման մոդելն արդի սահմանադրականության շրջանակներում՝ նպաստելով իշխանության ճյուղերի միջև համագործակցության հաստատմանը: Չնայած կուսակցական մեխանիզմները խթանում են օրենսդիրի և գործադիրի միջև համագործակցություն, ինչը խորհրդարանական կառավարման համակարգի առանձնահատկություններից է, այդուհանդերձ իշխանությունների տարանջատման սկզբունքը կիրառելի է նաև սահմանափակ սահմանադրական կառավարման շրջանակներում: Միևնույն ժամանակ, կուսակցական համակարգերի շնորհիվ է, որ Եվրոպայի խորհրդարանական կառավարությունները հիմքեր են ստեղծել իշխանությունների «փափուկ» կամ «ձկուն» տարանջատման համար, ինչն էապես տարբերվում է նախագահական

և, մասնավորապես, Միացյալ Նահանգների նախագահական կառավարման համակարգին բնորոշ կոշտ մոդելից:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի բնույթն ազդում է կառավարման համակարգի, պետական ինստիտուտների կառուցման, իշխանությունների փոխհարաբերությունների, փոխադարձ վերահսկողության, գործադիրի՝ օրենսդիրի առջև պատասխանատվության մեխանիզմների, ինչպես նաև դատական իշխանության՝ որպես նախագահի, կառավարության և նախարարների գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնող ինստիտուտի, դերակատարության վրա:

Սահմանադրական կառավարման շրջանակներում գործառույթների տարանջատման կամ իրավասությունների տարբերակման փոխարեն իշխանությունների տարանջատման սկզբունքն ազդում է պետական ինստիտուտների ձևավորման, գործարկման, փոխադարձ վերահսկողության և պատասխանատվության վրա՝ օրենքի գերակայության հիման վրա:

Իշխանության ճյուղերի ձևավորման նպատակով կիրառվող իշխանությունների տարանջատման սկզբունքը ենթադրում է իշխանության անկախ աղբյուրների առկայություն՝ իշխանության ճյուղերի կազմակերպման տարբեր ձևերի միջոցով: Եթե նախագահական կառավարման ձևում իշխանության երեք ճյուղերի ձևավորման համար կան լիովին տարբեր աղբյուրներ, ապա խորհրդարանական ձևում այդ աղբյուրների տարբերակումը հստակ չէ: Այդուհանդերձ, նույնիսկ խորհրդարանական համակարգերում օրենսդիրն ուղղակիորեն ընտրվում է ժողովրդի կողմից, և չնայած նրան, որ գործադիրի կամ կառավարության ձևավորման աղբյուրը խորհրդարանական մեծամասնությունն է, նախարարների նշանակման ժամանակ նախագահի մասնակցությունը պարտադիր պայման է:

Տարբեր բնույթների պատճառով իշխանության երեք ճյուղերն իրականացնում են տարբեր պետական գործառույթներ: Նրանք գործում են առանձին կամ միասին իրենց իրավասությունների սահմաններում, փոխգործակցում են վերահսկողության և համագործակցության շրջանակներում: Այդ համատեքստում Մոնտեսպյոի

գաղափարները կարող են հանգեցնել այն թյուր մտահանգմանը, որ գոյություն ունի միայն պետական գործառույթների պարզ բաժանում:

Իշխանությունների տարանջատման սկզբունքը կարևոր դեր է կատարում ժողովրդավարական պետության ազատական համակարգի ձևավորման գործում՝ իշխանության ճյուղերին փոխադարձ պատասխանատվության ենթարկելու մեխանիզմների միջոցով:

Եթե արմատական ժողովրդավարական տեսություններում ժողովրդի ինքնիշխանությունը և ընտրագանգվածի ցանկություններից կախվածությունն ավանդաբար ընկալվում էին որպես պետական իշխանությունների նկատմամբ վերահսկողության հիմնական միջոց, ապա ազատական սահմանադրականությունը կարևորում է փոխադարձ վերահսկողության և պատասխանատվության ընթացակարգերը՝ բռնապետության դրսևորումներն ու իշխանության չարաշահումը կանխելու համար<sup>9</sup>: Մեծ չափով ժողովրդավարական կառավարման համակարգում վերահսկողության և պատասխանատվության ընթացակարգերը ձևավորվել են երկու քաղաքական հոսանքների՝ արմատական ժողովրդավարության և քաղաքական լիբերալիզմի, գաղափարների միաձուլումից:

Օրենսդիրը ենթակա է ընտրագանգվածին՝ քաղաքական վերահրակողության, գործադիրին՝ խորհրդարանի լուծարման իրավասության, սահմանադրական դատարանին՝ խորհրդարանի ընդունած օրենքների սահմանադրականության նկատմամբ դատական վերահրակողության, մեխանիզմներով:

Նախագահին պատասխանատվության ենթարկելու համար կարող է կիրառվել իմփիչմենթի պահանջ. պետության գլխին իշխանությունից հեռացնելու առանձնահատուկ բարդ գործընթաց, որն իրականացվում է հատուկ սահմանված կարգով և կոնկրետ հանգամանքներում: Նախարարները խորհրդարանի առջև քաղաքական պատասխանատվություն են կրում նախագահի ընդունած որոշումների կրկնաստորագրման միջոցով:

<sup>9</sup> Այդ միտումներն ի հայտ եկան առաջին գրավոր սահմանադրություններում: Զապումների և պատասխանատվության մեխանիզմների անհրաժեշտության լավագույն հիմնավորումը տվել է Ջ. Մեդիսոնը, *The Federalist Papers*, New Yoork, 1961, N 51, 322.

Կառավարությունը կոլեկտիվ պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև և վերջինիս անվտանգության քվեի դեպքում պարտավոր է հրաժարական տալ: Նախարարների անհատական պատասխանատվությունը կարող է ունենալ քաղաքական, քրեական կամ քաղաքացիական բնույթ և, կախված դրանից, համապատասխան ընթացակարգերն իրականացնում է օրենսդիր կամ դատական իշխանությունը: Կառավարության և նախարարների իրավական ակտերը ենթակա են վարչական դատարանների վերահսկողությանը՝ խորհրդարանի ընդունած օրենսդրական ակտերին համապատասխանության տեսանկյունից:

Դատական իշխանությունը, որն ավելի անկախ է, քան իշխանության երկու այլ ճյուղերը, պարտավոր է գործել սահմանափակությանը և օրենքներին համապատասխան: Միաժամանակ, դատավորներն օժտված են անձեռնմխելիությամբ և կարող են պաշտոնանկ արվել միայն բացառիկ դեպքերում՝ իմփիչմենթի պահանջի կամ Բարձրագույն դատական խորհրդի կողմից իրականացվող հատուկ ընթացակարգերի ճանապարհով:

Պետական իշխանությունների ձևավորման, գործառույթների իրականացման և պատասխանատվության ենթարկման այս ակնարկը հաստատում է իշխանությունների բազմակողմ տարանջատման և դրանց միջև կոնֆլիկտների առաջացման հնարավորությունները: Ուստի, իշխանությունների տարանջատման սկզբունքը չի կարող մեկնաբանվել սուկ որպես պետական գործառույթների բաժանում:

Ժողովրդավարական սահմանադրական համակարգերում օրենսդիրի և գործադիրի տարանջատման աստիճանը կախված է կառավարման ձևից և այն «իրավական միջավայրից», որին պատկանում է երկիրը: Միաժամանակ, դատական իշխանության կառուցվածքային և ֆունկցիոնալ անկախության աստիճանը միշտ ավելի բարձր է, քան իշխանության մյուս երկու ճյուղերի դեպքում է, քանզի վերջիններս ձևավորվել են որպես քաղաքական պայքարի դաշտ, որտեղ ամենակարևոր խաղաղույթն իշխանությունն է: Դատական համակարգի վերաբերյալ սահմանադրական դրույթները մշակվել են կանխելու դատական իշխանության՝ քաղաքական խաղի սուբյեկտի վերածվելը:

Դասական մեկնաբանությամբ իշխանությունների տարանջատման սկզբունքի էությունն էլ ավելի է բարդանում կապված քաղաքական որոշումների ընդունման ժամանակ գործառույթների տարանջատման հետ՝ պետական քաղաքականության սահմանում, իրականացում և քաղաքական որոշումների նկատմամբ վերահսկողություն<sup>10</sup>: Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները կարող են գործել առանձին կամ իրականացնել խառը գործառույթներ: Այս դեպքում քաղաքական գործառույթների տարանջատումը չի համընկնում այդ իշխանությունների՝ որպես կոնկրետ իշխանության միակ տիրապետողի, տարանջատման հետ:

Իշխանությունների հավասարակշռությունը պահպանվում է իշխանության ճյուղերի փոխադարձ կախվածության և համագործակցության միջոցով՝ բախումներից խուսափելու, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև ինստիտուտներից մեկի ձեռքում բացարձակ իշխանության կենտրոնացման վտանգը կանխելու համար: Ինստիտուտների ֆունկցիոնալ համագործակցությունը չի ենթադրում դրանց վերապահված լիազորությունների միավորում և չի կարող մեկնաբանվել որպես իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտում և իշխանության միասնականության սկզբունքի այլափոխում: Ուստի, այն հաստատագրումը, որ ժամանակակից ազգ-պետություններին բնորոշ է պետական իշխանության միասնականությունը և որ իշխանությունների տարանջատումը ենթադրում է միայն պետական գործառույթների պարզ բաժանում, կարող է գնահատվել որպես դիտարկվող սկզբունքի բազմակողմ ասպեկտներին վերաբերող բարդ հարցերից խուսափելու փորձ: Նույնիսկ գործառույթների պարզ տարանջատման կողմնակիցները չեն կարող պնդել, որ ժողովրդավարական պետություններում որևէ պետական ինստիտուտ ինչ որ պահի չի կարող ստանձնել լիակատար իշխանություն՝ օրենքի զերակայության, սահմանափակ լիազորություններով պատասխանատու կառավարության պայմաններում:

<sup>10</sup> **Loewenstein K.**, Political Power and the Governmental Process, Chicago Univ. Press, 1966.

## **Բուլղարիայի սահմանադրական փորձն իշխանությունների տարանջատման ոլորտում**

Բուլղարիայի Հանրապետության 1991թ. սահմանադրության մեջ իշխանությունների տարանջատման սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել պետական իշխանությունների ձևավորման, կառուցվածքի, իրավասությունների, փոխհարաբերությունների և պատասխանատվության վերաբերյալ սահմանադրական դրույթների համատեքստում: Բուլղարիայի սահմանադրության 8-րդ հոդվածը մեկնաբանելիս հարկ է հաշվի առնել սահմանադիր իշխանության և դրա իրականացնողների՝ Ազգային մեծ ժողովի և խորհրդարանի, տարբերակումը, որոնք գործում են սահմանադրության 9-րդ գլխում (Սահմանադրական փոփոխություններ: Նոր սահմանադրության ընդունում) սահմանված ընթացակարգային պահանջներին, այդ թվում՝ որոշումների ընդունման ժամանակ ձայների բացարձակ մեծամասնության պահանջին, համապատասխան:

Պետական իշխանության երեք ճյուղերը չեն կարող իրականացնել իրենց գործառնություններն առանց փոխադարձ կախվածության, վերահսկողության և համագործակցության: Ժողովրդավարական սահմանադրական կառավարման ձևում իշխանության ճյուղերը փոխգործակցում են սահմանադիր իշխանության ձևավորած մեկ ընդհանուր սահմանադրական շրջանակներում:

Խորհրդարանական կառավարման համակարգում օրենսդիր իշխանության միակ տիրապետողը միապալատ Ազգային ժողովն է, որն իրականացնում է խորհրդարանական վերահսկողություն պետական քաղաքականության նկատմամբ: Գործադիր իշխանությունն իրականացնում են Նախարարների խորհուրդը և վարչապետը: Դատական իշխանությունն իրականացնում են ընդհանուր իրավասության և վարչական դատարանները, որոնք գործում են իշխանության մյուս ճյուղերից անջատ և Բարձրագույն դատական խորհրդի վերահսկողության ներքո՝ անկախության երաշխավորման համար:

Առաջին հայացքից թվում է, թե նախագահը գործում է պետական իշխանությունների եռակողմ ձևաչափից դուրս, քանզի նրա իրավասությունների որոշման առաջնային գործոնը իշխանու-

յունների երկրորդական բաժանումն է՝ առաջնային տարանջատման ճյուղերի միջև հավասարակշռություն ապահովելու և փոխադարձ վերահսկողության հավելյալ մեխանիզմներ ստեղծելու համար: Մահմանադրական խորհրդարանական կառավարման ձևում պետության գլուխը, լինելով ժողովրդի ներկայացուցիչ, ունի իշխանության այլ ճյուղերի կողմից իշխանության չարաշահման փորձերին արձագանքելու բացառիկ իրավասություններ և գործառույթներ՝ մասնավորապես այն դեպքերում, երբ ոտնահարվում են քաղաքացիական և քաղաքական ազատությունները կամ արձանագրվում է սահմանադրությամբ սահմանված լիազորությունների չարաշահում: Նախագահի ինստիտուտին վերապահված են այնպիսի լիազորություններ, որոնք կարող են իրականացվել միայն իշխանության այլ ճյուղերի հետ համագործակցությամբ, օրինակ՝ նշանակումների կամ հրամանագրերի արձակման լիազորությունները, որոնք չեն կարող իրականացվել առանց գործադիր մարմինների, մասնավորապես՝ խորհրդարանի առջև պատասխանատու նախարարների կամ Բարձրագույն դատական խորհրդի նախաձեռնության կամ առաջարկության: Չլինելով իշխանությունների հորիզոնական տարանջատման արդյունքում ձևավորված պետական իշխանություններից որևէ մեկի անմիջական տիրապետող՝ Բուլղարիայի նախագահն առավել մոտ է գործադիր իշխանությանը և իրականացնում է կարևոր քաղաքական գործառույթներ: Քաղաքական ազդեցության և բարոյական հեղինակության շնորհիվ նախագահն իրականացնում է նաև «չեզոք իշխանության» (*“Pouvoir neutre”*) որոշ գործառույթներ, մասնավորապես՝ սահմանադրական կայուն կառավարման ապահովման, ինչպես նաև իշխանության ճյուղերի միջև առաջացած կոնֆլիկտները բանակցությունների ճանապարհով կարգավորելու գործում:

Մահմանադրական դատարանը, որն իրականացնում է հետևողական, կենտրոնացված և մասնագիտացված դատական վերահսկողություն խորհրդարանի ընդունած իրավական ակտերի սահմանադրականության նկատմամբ, պետական իշխանության ճյուղերի և նույնիսկ դատական համակարգի կառուցվածքում ներառված չէ: Մահմանադրական դատարանը սահմանադրության գերակայության և իշխանությունների տարանջատման սկզբունքի



պահպանման հիմնական ինստիտուցիոնալ երաշխավորն է: Անկասկած, սահմանադրական դատարանը սահմանափակ լիազորություններով օժտված պետական ինստիտուտ է, որը, սակայն, իրավասու է վերահսկել պետական իշխանությունների գործունեության իրականացումը սահմանադրական սահմանափակումների շրջանակներում: Ուստի, սահմանադրական դատարանն ունի միջնորդի դերակատարություն սահմանադիր իշխանության և օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունների միջև: Հետևաբար, եթե նախագահն ունի սահմանադրության գերակայության երաշխավորի, ապա սահմանադրական դատարանը՝ դատական միջնորդի կարգավիճակ իրավասությունների տարանջատման առնչությամբ պետական ինստիտուտների միջև ծագած կոնֆլիկտների կարգավորման ժամանակ:

Օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, որը 1991թ. սահմանադրությամբ և խորհրդարանական կառավարման համակարգի զարգացման միտումների համաձայն, իրականացնում է վերահսկողություն գործադիրի և, մասնավորապես, կառավարության քաղաքականության նկատմամբ: Տրնովոյի սահմանադրության ընդունումից ի վեր երկրում գործում է միապալատ խորհրդարան<sup>11</sup>: Ազգային ժողովի կազմում են երկու հարյուր քառասուն պատգամավոր, որոնք ընտրվում են համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրություններով՝ գաղտնի քվեարկության ճանապարհով: Պատկերավոր ընտրական իրավունքով օժտված են քսանմեկ տարեկանի հասած,

<sup>11</sup> 1879թ. Տրնովոյի սահմանադրության շուրջ քննարկումներից հետո ազնվականների երկրորդ՝ վերին պալատը բնորոշվում էր որպես սահմանադրական կառավարման ձևի պահպանողական տարր և խիստ քննադատության էր ենթարկվում որպես հակառակ ազդեցություն ունեցող, ունիտար պետության համար անբարենպաստ երևույթ, որը դանդաղեցնում է օրենսդրական գործընթացը և էպպես թուլացնում քաղաքական ներկայացուցչականությունը: Ի տարբերություն երկպալատ խորհրդարանին բնորոշ թերությունների՝ դրա առավելությունները հանրային դիսկուրսում չներկայացվեցին, և թվում է՝ տեսանելի ապագայում սահմանադրական բարեփոխումների ժամանակ նույնիսկ չի արծարծվի դրա ստեղծման հնարավորությունը: 1991թ. սահմանադրության բոլոր տասնվեց նախագծերը նախատեսում էին միապալատ խորհրդարան, իսկ Ազգային մեծ ժողովի Սահմանադրական հանձնաժողովը նույնիսկ լուրջ ուշադրության չարժանացրեց խորհրդարանի կառուցվածքը:

դատարանի որոշմամբ անգործունակ չճանաչված և ազատագրվման մեջ չգտնվող անձինք: 1991թ. Սահմանադրությամբ սահմանված է, որ միայն Բուլղարիայի քաղաքացիները կարող են առաջադրվել խորհրդարանական և նախագահական ընտրություններում<sup>12</sup>:

1991թ. սահմանադրության ընդունումից ի վեր Բուլղարիայում անցկացվել են ութ համընդհանուր ընտրություններ (1991թ., 1994թ., 1997թ., 2001թ., 2006թ., 2009թ., 2013թ. և 2014թ.)՝ համամասնական ընտրակարգով: Խորհրդարանում տեղերի բաշխման համար կիրառվել է դ'Օնտի մեթոդը<sup>13</sup>: Չնայած համամասնական ընտրակարգը սուր քննադատության էր արժանանում բոլոր նախընտրական բանավեճերում, քանզի պայմաններ է ստեղծում կուսակցությունների առաջնորդների՝ թեկնածուների ընտրության վրա ազդեցության համար՝ բացառելով ավելի մեծ թվով անկախ պատգամավորների ընտրության հնարավորությունն, այդուհանդերձ այն առ այսօր կիրառվում է: Այդ ուղղությամբ առավել կարևոր փոփոխությունները վերաբերում են միասնական ընտրական օրենսգրքի չորս դրույթների կողիֆիկացիային, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների

<sup>12</sup> 1995թ. տեղական ընտրությունների վերաբերյալ օրենքի ընդունման ճանապարհով փորձ արվեց ընդլայնել այդ դրույթի կիրառման ոլորտը քաղաքապետի ընտրությունների ժամանակ: Սակայն սահմանադրական դատարանը չեղարկեց այդ օրենքը՝ մատնանշելով դրանում ներառված մի շարք դրույթների հակասահմանադրականությունը: Սահմանադրության հիմնադիր հայրերը երկքաղաքացիությունը համարում էին պասիվ ընտրական իրավունքի խոչընդոտ պետությունների շահերի միջև հնարավոր բախումների պատճառով: Եթե երկքաղաքացիություն ունեցող անձը ցանկանում է առաջադրվել խորհրդարանական ընտրություններում, ապա պետք է նախքան գրանցումը հրաժարվի այլ երկրի իր քաղաքացիությունից: 1996թ. 37-րդ գումարման խորհրդարանի կազմի ձևավորումից հետո Բուլղարիայի սահմանադրական դատարանը չեղարկեց քվեարկությունը, որի արդյունքներով ընտրվել էր Բուլղարիայի և ԱՄՆ-ի քաղաքացիություն (հպատակագրման ճանապարհով ձեռք բերված) ունեցող անձ:

<sup>13</sup> Դ'Օնտի մեթոդը փոխառվել է Գերմանիայի Բունդեսթագում համամասնական ներկայացուցչականության ժամանակ մանդատների բաշխման ընթացակարգից: Համակարգի կիրառումը ձեռնտու է կուսակցությունների առաջնորդներին, քանզի խորհրդարանում ներկայացված սահմանափակ թվով կուսակցությունների առկայության պայմաններում այն նպաստում է դրա անդամների միասնականությանը, կուսակցական կարգապահությանն ու ամրապնդում խորհրդարանական մեծամասնության կայունությունը:

նշանակմանը և նախապատվության քվեակարգի (preferential voting) ներմուծմանը՝ կուսակցության առաջնորդների վերահսկողությունը ընտրական ցուցակների վրա նվազեցնելու համար:

Ավելին, կուսակցական ցուցակները սահմանափակում են քվեարկողների ազատությունը, քանզի վերջիններս իրենց ընտրությունը կատարում են ըստ կուսակցության նախապատվությունների և, արդյունքում, թեկնածուների անհատական որակները մղվում են երկրորդ պլան: Կուսակցությունների ազդեցությունը թեկնածուների ընտրության վրա ունի երկու կարևոր նշանակություն. մի կողմից կառավարությունը գործում է առավել կայուն պայմաններում՝ հենվելով համամասնորեն ընտրված խորհրդարանի վրա, մյուս կողմից կուսակցությունների ներսում մեծանում է կարգապահության աստիճանը՝ պայմանավորված խորհրդարանական բանավեճերի, ինչպես նաև կառավարության ներկայացրած իրավական ակտերին կողմ կամ դեմ արտահայտվելու կարևորության նվազեցմամբ: Պատգամավորներն օժտված են անձեռնմխելիությամբ՝ կալանավորման և քրեական հետապնդման դեպքում, բացառությամբ՝ ծանր հանցագործության դեպքերի, որի ժամանակ պահանջվում է խորհրդարանի կամ, եթե վերջինս նստաշրջանում չէ, դրա նախագահի թույլտվությունը: Եթե պատգամավորը ձերբակալվել է ծանր հանցագործության կատարման պահին, ապա անհրաժեշտ է ոչ թե թույլտվություն, այլ միայն կալանավորման մասին ծանուցում:

Ազգային ժողովն իր գործունեությունն իրավասու է իրականացնել խորհրդարանի անդամների մեծամասնության քվորումի առկայության պայմաններում<sup>14</sup>: Բոլոր որոշումներն ընդունվում են

<sup>14</sup> Գրանցման և քվեարկության համար խորհրդարանում օգտագործվում են նաև էլեկտրոնային քարտեր, ինչը երբեմն խախտումների պատճառ է դառնում՝ պայմանավորված խորհրդարանի բացակա անդամների փոխարեն քվեարկության հնարավորությամբ: Սա վտանգավոր է ներկայացուցչական ժողովրդավարության տեսանկյունից և հանգեցրել է քվեարկության ընթացակարգի փոփոխության վերաբերյալ դրույթների առաջադրմանը: 1999թ. սկզբին 38-րդ գումարման խորհրդարանի նախագահն առաջարկեց փոփոխություններ, որոնք հնարավորություն կտային խորհրդարանի բացակա անդամներին մասնակցելու քվեարկություններին այլ վայրերից ուղիղ եթերում հետևելով խորհրդարանական քննարկումներին: Քանզի սա

ձայների պարզ մեծամասնությամբ՝ բացառությամբ կառավարության նկատմամբ վստահության քվեի և նախագահի վետոյի կիրառումից հետո օրենքի նախագծերը կրկին քվեարկության դնելու դեպքերի:

Գործնականում օրենքի նախագծերի իննսուն տոկոսը խորհրդարանում ներկայացնում է կառավարությունը, ինչը բնականոն երևույթ է խորհրդարանական կառավարման համակարգում: Կառավարությունը մշտապես ավելի պատրաստված և իրազեկ է օրենքի նախագծերի ներկայացման անհրաժեշտության և կարգավորման ենթակա խնդիրների վերաբերյալ: Խորհրդարանի անդամների ներկայացրած օրենքի նախագծերի որակը բարելավելու փորձերը խորհրդարանական փորձագետների թվաքանակի չնչին ավելացման, ինչպես նաև Օրենսդրական խորհրդի ստեղծման ճանապարհով, չհանգեցրեցին կառավարության ազդեցության թուլացմանը օրենսդրական գործընթացի սկզբնական փուլում<sup>15</sup>:

Բուլղարիայի սահմանադրության մեջ ներառված մեկ այլ սկզբունք ևս արժանի է հիշատակման: 1991թ. Սահմանադրությամբ ամրագրված էր միջազգային նորմերի գերակայությունը ներպետական օրենքների նկատմամբ: Սահմանադրություն 4-րդ և 5-րդ հոդվածները

---

խորհրդարանական պրակտիկայում չլաված երևույթ էր, ուստի չարժանացավ լուրջ ուշադրության և հետագա քննարկումների:

<sup>15</sup> 1991թ. սահմանադրությունը չէր հստակեցնում օրենսդրական կարգավորմանը ենթակա ոլորտները, ինչպես օրինակ Ֆրանսիայի Հինգերորդ Հանրապետության 1958թ. սահմանադրությունը և Ռումինիայի Հանրապետության 1991թ. սահմանադրությունը: Չկար սահմանադրական, օրգանական և հատուկ կարգավիճակ չունեցող, օրենքների հստակ տարանջատում: Հաշվի առնելով Տրնովոյի սահմանադրությամբ կառավարությանը վերապահված օրենսդրական լիազորությունների չարաշահման դեպքերը՝ սահմանադրության հիմնադիր հայրերը հարկ չհամարեցին 1991թ. սահմանադրության մեջ ներառել լիազորող օրենսդրության վերաբերյալ դրույթներ, ինչը կարող էր դյուրացնել իրավական բարեփոխումների իրականացման գործընթացը: Օրենսդրական կարգավորմանը ենթակա որոշ ասպեկտներ վերաբերում են սահմանադրության երկրորդ գլխին, որն անդրադառնում է մարդու իրավունքներին: Խորհրդարանի օրենսդրական գործունեությանը ենթակա ոլորտների վերաբերյալ սահմանափակումների բացակայությունը ժամանակ առ ժամանակ պատճառ է դառնում խորհրդարանի անդամների և խորհրդարանական խմբերի փորձերին օրենսդրական կարգավորման ենթարկել այնպիսի ոլորտներ, որոնք, որպես կանոն, կարգավորվում են վարչական մարմինների ենթաօրենսդրական ակտերով:

սահմանում են, որ Բուլղարիայի Հանրապետության վավերացրած բոլոր միջազգային պայմանագրերը կազմում են ներպետական օրենսդրության մաս և դրանցում ներառված նորմերը գերակայություն ունեն դրանց հակասող ներպետական նորմերի նկատմամբ: Այդուհանդերձ, միջազգային նորմերը չպետք է փոխարինեն սահմանադրությամբ ամրագրված նորմերին: Հակասության առկայության դեպքում, նախքան Ազգային ժողովում միջազգային փաստաթղթի վավերացումը, սահմանադրական դատարանի առաջարկությամբ սահմանադրության մեջ պետք է համապատասխան փոփոխություններ արվեն:

Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանի վավերացմանը ենթակա են այն միջազգային փաստաթղթերը, որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ, անդրադառնում են պետության ներգրավվածությանը միջազգային կազմակերպություններում, նախատեսում են Բուլղարիայի Հանրապետության սահմանների ճշգրտումներ, ներառում են պետության ֆինանսական պարտավորություններ, նախատեսում են պետության մասնակցություն միջազգային արբիտրաժային և դատական վարույթների ժամանակ, անդրադառնում են մարդու հիմնարար իրավունքներին, ազդում են օրենքի գործողության վրա կամ պահանջում օրենսդրական բնույթի նոր միջոցների ձեռնարկում օրենքը գործողության մեջ դնելու համար:

2007թ. ԵՄ-ին Բուլղարիայի լիարժեք անդամակցությունից հետո ԵՄ-ի օրենսդրությունը ստացավ ուղղակի կիրառման ուժ:

Օրենսդիր իշխանության իրականացումից և միջազգային փաստաթղթերի վավերացումից զատ խորհրդարանն ընդունում է բյուջեն, սահմանում հարկերը, որոշում անցկացնել համաժողովրդական հանրաքվեներ, նշանակում և ազատում է վարչապետին ու նախարարներին, վարչապետի առաջարկով սահմանում Նախարարների խորհրդի կադրային և կառուցվածքային փոփոխությունները, հայտարարում պատերազմ, խաղաղություն և ռազմական դրություն, վավերացնում պետության վարկային համաձայնագրերը, համաձայնություն է տալիս Բուլղարիայի զինված ուժերի տեղակայմանը երկրի սահմաններից դուրս, ինչպես նաև արտաքին զինուժի տեղակայմանը երկրի տարածքում կամ տեղաշարժը սեփական տարածքով, նշանակում նախագահական ընտրություններ, հայտարարում համա-

ներում, հաստատում շքանշաններ, մեդալներ և սահմանում պետական տոները: Ազգային ժողովը նաև ընտրում է սահմանադրական դատարանի դատավորների մեկ երրորդին և Բարձրագույն դատական խորհրդի անդամների՝ սահմանված քվոտայով:

1991թ. Բուլղարիայի սահմանադրությամբ ամրագրված էր խորհրդարանի ինքնալուծարման հնարավորություն, մանդատի չեղարկում ժողովրդի կողմից, ինչպես նաև սահմանված դեպքերում գործադիրի կողմից խորհրդարանի լուծարում<sup>16</sup>: Նախագահը կարող է լուծարել խորհրդարանը, եթե խորհրդարանի աջակցությունը վայելող կառավարության ձևավորման ջանքերն անարդյունավետ են:

Գործադիր իշխանությունը վերապահված է Նախարարների խորհրդին, որին, պառլամենտարիզմի սկզբունքների համաձայն, ընտրում է Ազգային ժողովը՝ մեծամասնություն կազմող կուսակցությունից կամ կոալիցիայից: Այն գործում է այնքան ժամանակ, քանի դեռ վայելում է խորհրդարանի վստահությունը<sup>17</sup>:

1991թ. Մահմանադրությամբ ձևավորվեց խորհրդարանական կառավարման այնպիսի համակարգ, որում կառավարության նկատմամբ վստահության քվեն վերջինիս նշանակման ընթացակարգի պարտադիր պայման է: Կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև, և խորհրդարանական մեծամասնությունը անվստահության քվեով կարող է պահանջել կառավարության հրաժարականը՝ անհամաձայնություն հայտնելով գործադիրի վարած ամբողջ կամ կոնկրետ ոլորտի առնչվող քաղաքականության վերաբերյալ:

Նախարարների խորհրդի ձևավորման ընթացակարգը փոխառվել է Հունաստանի 1975թ. սահմանադրությունից: Այդ ընթացակարգը մշակվել էր կանխելու հաճախակի խորհրդարանական ճգնաժամերը,

<sup>16</sup> **Markesinis B.S.**, *The Theory and Practice of Dissolution of Parliaments*, Cambridge, 1972.

<sup>17</sup> Կառավարության կայունության ապահովման համար 1991թ. սահմանադրական նախագծում ներկայացվեցին ժամանակակից կատարելագործված պառլամենտարիզմի սկզբունքները և մեխանիզմները: Բուլղարիայի դեպքում դա վերաբերում է ձայների պարզ մեծամասնությանը՝ կառավարությանը վստահություն հայտնելու, և բացարձակ մեծամասնությանը՝ անվստահություն հայտնելու ժամանակ, **Tanchev E.**, *Parliamentarism Rationalized*, *East European Constitutional Review*, 1992, 1, 2.

որոնց բռնկումը հնարավոր էր կանխատեսել՝ որպես կուսակցական պայքարի սրման, ինչպես նաև փոխզիջման հասնելու անկարողության հնարավոր արդյունք՝ պայմանավորված հասարակության կտրուկ բևեռացմամբ անցումային շրջանի բարդությունների և մարտահրավերների պայմաններում:

1991թ. Մահմանադրությամբ նախագահն ակտիվ դերակատարություն ունի կառավարության ձևավորման, սակայն սահմանափակ դերակատարություն՝ խորհրդարանի լուծարման ժամանակ: Խորհրդարանական խմբակցությունների հետ քննարկումից հետո նախագահը կառավարությունը ձևավորելու համար նշանակում է վարչապետի պաշտոնակատարին, որի թեկնածությունն առաջադրում է խորհրդարանում առավելագույն թվով տեղեր ունեցող կուսակցությունը: Եթե վարչապետի պաշտոնակատարը յոթօրյա ժամկետում ձախողում է կառավարության կազմի ձևավորումը, ապա նախագահն այդ իրավասությամբ օժտում է խորհրդարանի թվով երկրորդ կուսակցության առաջադրած վարչապետի նոր պաշտոնակատարին: Եթե վարչապետի երկրորդ պաշտոնակատարը ևս ձախողում է կառավարության ձևավորման գործընթացն, ապա նախագահը նշանակում է խորհրդարանում նվազագույն թվով տեղեր ունեցող կուսակցություններից որևէ մեկի առաջադրած թեկնածուին՝ իր հայեցողությամբ: Կառավարության ձևավորման երրորդ փորձի ձախողումը փաստում է գործող խորհրդարանի՝ կառավարություն ձևավորելու անկարողության մասին: Ուստի, այդ դեպքում նախագահը լուծարում է Ազգային ժողովը, երկամյա ժամկետում նշանակում նոր համապետական ընտրություններ և ձևավորում ժամանակավոր կառավարություն (caretaker cabinet), որն իր մանդատը ստանում է նախագահից և պատասխանատու է նախագահի առջև<sup>18</sup>:

<sup>18</sup> 1997թ. քաղաքական ճգնաժամը, որն առաջացել էր սոցիալիստական կուսակցության առաջադրած թեկնածուի՝ Ժ. Վիդենովի ձևավորած կառավարության օրոք, վատ մշակված և թերի իրականացվող քաղաքականության արդյունքում, և որին հաջորդեց խորհրդարանի լուծարումը, աղետալի հետևանքներ ունեցավ՝ մասսայական անկարգությունների տեսքով, որոնք լուրջ վտանգ էին ներկայացնում խաղաղ ճանապարհով ժողովրդավարությանն անցման համար, ինչը 1989թ. ի վեր ճանաչվել էր որպես Բուլղարիայի մեծագույն նվաճումներից:

Նախագահի՝ 1991թ. սահմանադրությանը պետության ընտրվող ղեկավարի, ինստիտուտը ձևավորվեց որպես ասիմետրիկ ինստիտուտ: Ուղղակիորեն ընտրվելով բացարձակ մեծամասնական ընտրակարգով՝ երկու փուլով, նախագահը պաշտոնավարում է հինգ տարի ժամկետով՝ երկու անգամ անընդմեջ ընտրվելու հնարավորությամբ: Այդ ճանապարհով սահմանադրական համակարգը ձեռք է բերում երկակի լեգիտիմություն: Միաժամանակ, նախագահի լիազորությունները բավական սահմանափակ են, քանզի սահմանադրության նախագծման ժամանակ խորհրդարանի անդամների մեծամասնությունը վախենում էր միանձնյա իշխանությունից, ինչը դարձել էր քաղաքական ավանդույթ 1878թ. ազատագրումից ի վեր և ողջ խորհրդային ժամանակաշրջանում:

Նախագահին վերապահված լիազորությունների առումով Բուլղարիան ավելի մոտ է Գերմանիային, քան Ֆրանսիայի Հինգերեքոդ Հանրապետությանը, իսկ նախագահի ինստիտուտի տեսանկյունից՝ Ֆինլանդիային կամ Ավստրիային: Բուլղարիան համարվում է խորհրդարանական կառավարման ձև ունեցող միակ նոր ժողովրդավարությունը, որում սահմանադրությամբ ամրագրվեց փոխնախագահի ինստիտուտը<sup>19</sup>: Փոխնախագահն ընտրվում է նախագահի հետ միաժամանակ՝ նույն ընտրացուցակով, և հավասարա-կշռություն սահմանելուց զատ փոխարինում է նախագահին թափուր պաշտոնի դեպքում մինչև մանդատի ավարտը: Նախագահը բանակի գլխավոր հրամանատարն է, նախագահում է Ազգային անվտանգության խորհրդի նիստերում, իսկ 1991թ. սահմանադրության ընդունումից ի վեր՝ նաև Ազգային խորհրդատվական խորհրդի նիստերում: Նախագահը նշանակում է զինված ուժերի հրամանատարներին, հայտարարում պատերազմ կամ արտակարգ իրավիճակ, երբ խորհրդարանը նստաշրջանում չէ: Նախագահը չի կարող հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, սակայն ունի վետոյի կիրառման իրավունք, որը հնարավոր է հաղթահարել խորհրդարանում ձայների բացարձակ մեծամասնությամբ: Նախագահը կարող է նաև ազդել օրենսդրական գործընթացի վրա՝ ժողովրդին կամ Ազգային մեծ

<sup>19</sup> Առ այսօր փոխնախագահի ինստիտուտ ունեցող խորհրդարանական կառավարման ձևի եզակի օրինակ է Հնդկաստանը (1949թ. ի վեր):



ժողովին հասցեագրված իր ուղերձներով: Նախագահի՝ որպես քաղաքական միջնորդի, լիազորությունները ներառում են փոխզիջումների հաստատումը, հակամարտությունների կարգավորումն, ինչպես նաև սահմանադրական համակարգի բնականոն գործունեության ապահովումը: Նախագահը քաղաքական պատասխանատվություն չի կրում իր գործողությունների և վարած քաղաքականության համար, բացառությամբ՝ սահմանադրության խախտման դեպքերի, որի ժամանակ խորհրդարանի որակյալ մեծամասնությունը կարող է իմփիչմենթի պահանջ ներկայացնել և գործը հանձնել սահմանադրական դատարանի քննությանը: Միաժամանակ, կրկնաստորագրման սահմանադրական պահանջը նպատակ ունի ամրապնդել նախագահի իշխանությունը՝ համապատասխան իրավական ակտը ստորագրող նախարարին ենթարկելով խորհրդարանի առջև պատասխանատվության՝ արդյունքում ապահովելով սահմանափակ իրավասությամբ և պատասխանատու կառավարություն:

Նախարարների խորհուրդը գլխավորում է վարչապետն, ով, որպես կանոն, խորհրդարանական ընտրություններում հաղթանակած կուսակցության կամ կոալիցիայի առաջնորդն է<sup>20</sup>:

### **Իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառումը սահմանադրական վերահսկողության նպատակով**

Իշխանությունների տարանջատման սկզբունքը և դրա կիրառման ձևն առաջնային նշանակություն ունեն սահմանադրական դատարանի *locus standi* սկզբունքի կամ սահմանադրական վերահսկողությանը ենթակա՝ սահմանադրության և պետական

<sup>20</sup> Այդուհանդերձ, 1992-1994թթ. պետության կառավարումն իրականացնում էր խորհրդարանում զբաղեցրած տեղերի թվով երրորդ՝ «Իրավունքների և ազատությունների շարժում» կուսակցության մանդատի հիման վրա ձևավորված կառավարությունը՝ երրորդ խորհրդարանական ուժի՝ Բուլղարիայի սոցիալիստական կուսակցության աջակցությամբ: Վարչապետի պաշտոնը զբաղեցրել էր նախագահի նախկին խորհրդատու Լ. Բերովը: 1991թ. սահմանադրությամբ Կառավարության կազմն, ինչպես նաև նախարարների թվաքանակը սահմանված չէր: Դրանց վերաբերյալ որոշումները կայացնում էր Ազգային մեծ ժողովը: Ներկայումս Նախարարների խորհրդի կազմում են փոխվարչապետը, նախարարները և պետական հանձնաժողովների նախագահները: Միակուսակցական կառավարությունները գերակայում են:

կառավարման սահմանված ձևի, համար: Գոյություն ունեն իշխանությունների տարանջատման սկզբունքի երեք հիմնական չափումներ՝ պետության սահմանադրական և իրավական համակարգի վրա սահմանադրական դատարանների ազդեցության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, այդ մոտեցումը հաշվի է առնում սահմանադրական դատարանների փոխհարաբերությունը

- սահմանադիր իշխանություն-պետական իշխանություններ շրջանակներում,

- իշխանության այլ ճյուղերի՝ գործադիր, օրենսդիր, և որոշ չափով՝ տեղական իշխանությունների հետ,

- այլ դատարանների և դատական իշխանության մեջ մտնող ինստիտուտների հետ:

Սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգերին բնորոշ են սահմանադրական դատարանի հետևյալ մոդելները.

1. Դատական իշխանության մաս, որը, մասնավորապես, նախատեսված է քաղաքացիների և իրավաբանական անձանց բողոքները քննարկելու համար: Դա կարող է ուղղակիորեն ամրագրվել սահմանադրության մեջ կամ, անուղղակիորեն՝ դատական իշխանության վերաբերյալ սահմանադրական գլխում՝ ներառելով սահմանադրական դատարանի վերաբերյալ դրույթներ: Միաժամանակ, քանի որ դատական որոշումները ենթակա են բողոքարկման և կարող են ներկայացվել սահմանադրական դատարանի վերանայմանը, ուստի վերջինս կարելի է դիտարկել որպես դատական իշխանության բարձրագույն ատյան:

2. Մոնտեսպյոի սահմանած իշխանության ճյուղերի դասական եռյակի շրջանակներից դուրս գտնվող ինստիտուտներ: Սահմանադրական դատարանը պետական իշխանության չորրորդ կամ հինգերորդ ճյուղն է Բ. Կոնստանի քաղաքական միջնորդության «չեզոք իշխանության» տեսանկյունից, որը խորհրդարանական կառավարման համակարգում վերապահված է պետության գլխին: Այլ կերպ ասած, սահմանադրական դատարանը չեզոք իրավական միջնորդի կարգավիճակում՝ որպես իշխանությունների առաջնային տարանջատման շրջանակից դուրս գտնվող և երկրորդական տարանջատման արդյունքում ձևավորված վերահսկողական մեխանիզմ:

3. Պրագմատիկ մոտեցում՝ *locus standi*-ի սահմանում իշխանությունների տարանջատման սկզբունքի շրջանակներում՝ սահմանադրական դատարանի գործառույթների հիման վրա:

4. Սահմանադիր իշխանության նկատմամբ վերահսկողություն իրականացնող ինստիտուտ և որպես այդ երկու իշխանությունների միջև սահմանափակ լիազորություններով օժտված միջնորդ: Պետական իշխանություններն իրավասու չեն զարգացնել, ընդլայնել կամ փոփոխել սահմանադրությունը, ինչը սահմանադիր իշխանության մենաշնորհն է, սակայն պարտավոր են սահմանադրության նախանըժված սահմանների շրջանակում մեկնաբանել և կատարել-լազործել սահմանադրական դրույթները:

### **Իշխանությունների տարանջատման սկզբունքի վերաբերյալ չափումը**

**Վերաբերյալ իրավական համակարգեր:** Սահմանադրական կառավարման ձևերի զարգացման միտումները.

- Ուլպիանյան հռոմեական իրավունքի՝ *ius civile* (քաղաքացիական իրավունքի) և *ius gentium* (ազգերի իրավունք) իրավական նորմերի հստակ տարանջատումից մինչև *pacta sunt servanda* (ձեռք բերված համաձայնությունների հարգման սկզբունք) սկզբունքի ներմուծումը միջազգային հանրային իրավունքում,

- *pacta sunt servanda* սկզբունքից, միջազգային իրավունքի գերակայության սկզբունքից, իրավական փոխառումներից և «փափուկ» իրավունքի միջազգային չափանիշների կիրառումից՝ համակարգված, աստիճանական անցում սահմանադրականության,

- սահմանադրականությունից՝ ոչ համաչափ զարգացած, սակայն փոխգործակցող սահմանադրական կարգեր,

- չամրագրված սահմանադրական պարտավորություններից և նախաձեռնություններից՝ սահմանադրական բազմակարծություն:

Իշխանությունների վերաբերյալ տարանջատման համատեքստում սահմանադրական դատարանն ունի ներաբերյալ օրենսդրությունը վերաբերյալ սահմանադրական համակարգերին համապատասխանեցնելու առանձնահատուկ գործառույթներ.

1. Սահմանադրական դատարանները և վերաբերյալ իրավունքը կանխում ու կարգավորում են կոնֆլիկտները միջազգային

փաստաթղթերի, իսկ եվրոպական ինտեգրման համատեքստում՝ ԵՄ-ի օրենսդրության հիման վրա,

- ներդաշնակեցում, միասնականացում, փոխառումներ,
- հիերարխիկ կառուցվածք, սահմանադրությունների «բացություն» և ազգային ինքնիշխանությունների միավորում,
- ներդաշնակ համակեցություն կամ ներդաշնակության ապահովում սահմանադրական կոնտրապունկտուալիզմի միջոցով:

2. Սահմանադրական և վերաբեռական դատարաններն իրականացնում են լիազորությունների տարանջատում ազգ-պետության սահմանադրությամբ ամրագրված իրավասությունների շրջանակներից դուրս և վերահսկում տարբեր դատական համակարգերի միջև սահմանների պահպանումը,

3. Սահմանադրական դատարանները համագործակցում են վերաբեռական դատարանների հետ ընդհանուր դատական պրակտիկայի և միմյանց հետ փոխգործակցող տարբեր սահմանադրական կարգերի շրջանակներում:

## **Եզրակացություն**

Սահմանադրության մշակման գործընթացում սահմանադրական սկզբունքները կարող են բնորոշվել որպես քաղաքական ինստիտուտների և իրավական նորմերի միջև կապող օղակ: Եթե սահմանադրության նախագծումը դիտարկվի որպես ֆորմալ նորմատիվ գործունեություն, ապա հնարավոր է ուսումնասիրել մի քանի վերափոխումներ. ժողովրդավարական արժեքների վերափոխումը սահմանադրական սկզբունքների, վերջիններիս վերափոխումը սահմանադրական նորմերի՝ ուղղված մի կողմից մարդու հիմնարար իրավունքների ճանաչմանը և պաշտպանությանը, մյուս կողմից ինստիտուտների ստեղծմանը և դրանց միջև իրավասությունների բաշխմանը: Սահմանադրական դրույթները պետական իրավական համակարգի հիերարխիայի սկզբունքով ստանում են մանրակրկիտ կարգավորում խորհրդարանի ընդունած օրենքներով կամ գործադիրի որոշումներով: Դրանց կողիֆիկացիան և գործողության մեջ դնելու իրավունքը վերապահված է սահմանադրական, ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարաններին: Հետևաբար,

ժողովրդավարական արժեքները կարող են դիտարկվել որպես սահմանադրական շրջանակների անկյունաքար: Սահմանադրական սկզբունքները ֆունկցիոնալ երաշխիք են մի կողմից մարդու իրավունքների և սահմանադրական կառավարման ապահովման, մյուս կողմից այն արժեքների պաշտպանության համար, որոնց շուրջ ձեռք է բերվել սահմանադրական փոխհամաձայնություն:

Արժեքները վճռորոշ ազդեցություն ունեն սահմանադրական սկզբունքների կիրառման վրա: Կայացած ժողովրդավարական համակարգը չի կարող գործել այն միջավայրում, որտեղ սահմանադրության հիմքում ընկած ժողովրդավարական արժեքների պաշտպանությունն արդյունավետ չի իրականացվում: Սահմանադրական համակարգի հիմքում ընկած ժողովրդավարական արժեքներից շեղումը և դրանց իրական ժողովրդավարական բովանդակության այլասերումը կարող է հանգեցնել սահմանադրական ժողովրդավարության ավարտին: Ժողովրդավարական սահմանադրության ոչ արդյունավետ գործարկման կամ ավտոկրատիայի վերափոխման վտանգը կանխելու համար անհրաժեշտ է սահմանադրական սկզբունքների պաշտպանություն նախապես համաձայնեցված ժողովրդավարական արժեհամակարգի շրջանակներում: Սահմանադրական ժողովրդավարություններում արժեքների և սկզբունքների միջև կապի խզումը կարող է ոչ ժողովրդավարական արժեքների պաշտպանության պատճառ դառնալ:

Ձայների մեծամասնության սկզբունքը (majority rule) կարող է օգտագործվել ընդդեմ ժողովրդի իշխանության՝ զրկելով ուղղակի կամ ներկայացուցչական ժողովրդավարության միջոցով պետական որոշումների վրա ազդելու հնարավորությունից՝ անգամ մարդու իրավունքների նկատմամբ լեգիտիմացված ոտնձգությունների միջոցով:

Իշխանությունների տարանջատումը կարող է վերածվել քաղաքական ազատության և անհատական իրավունքների սահմանափակման գործիքի այն դեպքում, երբ տարբեր լիազորություններով օժտված ինստիտուտները գործում են անջատ, սակայն, միևնույն ժամանակ, ժողովրդավարական կառավարման սահմափակման վերաբերյալ ընդհանուր դիրքորոշմամբ: Նույն ելքը հնարավոր է նաև, երբ իշխանությունների միջև հակամարտության սրման հետևանքով հնարավոր չի լինում ապահովել կառավարման կայունությունը:

Օրենքի գերակայությունը (*Rechtsstaat*) ֆորմալ իմաստով կարող է օգտագործվել քաղաքական ազատության, արդարադատության և անվտանգության դեմ՝ օրինականացնելու բռնապետությունը կամ սահմանադրական միապետությունը: Այդուհանդերձ, սահմանադրական ժողովրդավարության կայունությունը պահանջում է արժեքների և սկզբունքների հարմարեցում սոցիալական իրականությանը՝ կանխելու ժողովրդավարական սահմանադրական համակարգի կործանումը՝ պայմանավորված գլոբալացված աշխարհում արագացված վերափոխումների առաջադրած մարտահրավերներին դիմակայելու անկարողությամբ:

## **Comparative and Bulgarian Implications of the Separation of Powers Principle**

EVGENI TANCHEV

*Constitutional Court of the Republic of Bulgaria, Bulgaria*

The article discusses the theoretical and practical issues regarding the adoption and implementation of one of the core ideas of democratic constitutions, i.e. the principle of separation of powers. The article highlights the importance of those values in social life that served as the basis for the formation of basic constitutional principles. It is being stated that even if the text of the Constitution contains democratic principles, they will not function in the absence of their original, truly democratic nature. The article also introduces the distortions that may function along with the democratic principles in case values having other origin are prevalent in society. The case of Bulgaria is investigated to demonstrate those problems and their solutions that are specific to post-socialist new democracies.